Կալիֆորնիայի շրջանների վերադասավորման հիմունքները

WeDrawTheLinesCA.org

Հիշեցում—Այսօր հանրային ոչ մի ներդրում չի առնվելու

Ըստ Կալիֆորնիայի կառավարական օրենսգրքի 8253(ա)(3) հատվածի--Հանձնաժողովի անդամներն ու անձնակազմը շրջանների վերադասավորման հարցերով չեն կարող հաղորդակցել որևէ անձի հետ կամ հաղորդակցություններ ստանալ որևէ անձից՝ հանրային լսումներից դուրս: Հետևաբար, Հանձնաժողովը այս կրթական ներկայացումների ընթացքում ոչ մի հանրային ներդրում չի ընդունի:

Հանրային ներդրում ներկայացնելու համար խնդրում ենք այցելել Հանձնաժողովի կայքը՝ WeDrawTheLinesCA.org:

Ի՞նչ է շրջանների վերադասավորումը

Գծումը նոր սահմանների, որոնք որոշում են, թե որ կալիֆորնիացիներն են ներկայացվում յուրաքանչյուր ընտրական



Ինչու ենք շրջանների քարտեզները վերագծում

- Համայնքները փոխվում են:
- Մարդիկ ծնվում են, մահանում և տեղափոխվում:
- Համայնքները ընդարձակվում և կրճատվում են:
- Տարածքներ, որտեղ մի ժամանակ բնակվում էին նույն քանակով մարդիկ, անհավասար են դառնում:

Ձեր ձայնը

- Ինչու՞ է կարևոր շրջանների վերադասավորումը
- Ինչու՞ պետք է ներգրավվեք
- Ձեր դերը գործընթացում

Շրջանների վերադասավորումը երբեմն օգտագործվել է համայնքներին բացառելու համար քաղաքական իշխանությունից: Լիովին մասնակցելով ու հսկելով առաջիկա շրջանների վերադասավորման գործընթացը, հնարավոր է, որ ավելի շատ համայնքներ ունենան իրենց կարիքներն ու շահերը արտահայտող իրենց ցանկացած թեկնածուներին ընտրելու ավելի լավ պատեհություն:

Your Voice
Your Choice

WE DRAW THE LINES CA

Շրջանների վերադասավորումն ինչպես է ազդում ձեզ

Իշխանություն մարդկանց

Պաշտպանեք ձեր հարցերը

Ֆինանսավորման նախապատվությունները



Համայնքային սահմաններ

WE DRAW THE LINES CA

Ճանապարհ դեպի արդար ներկայացուցչություն

- **Մարդահամար**—Ամեն տաս տարին մեկ ԱՄՆ-ի ամբողջ բնակչությունը հաշվվում է և տվյալներն օգտագործվում են նոր քարտեզների գծման համար՝ հաշվի առնելու բնակչային տեղաշարժերը նահանգներում և շրջաններում:
- **Վերաբաշխում—**Նահանգների միջև Ներկայացուցիչների պալատի աթոռների դաշնային վերաբաշխումը, որն արվում է յուրաքանչյուր ազգային մարդահամարից հետո՝ ապահովելու համար, որ նահանգներն աթոռները զբաղեցնեն իրենց բնակչության թվի բաժնեքանակի համաձայն:
- **Շրջանների վերադասավորում—**Գծումը նոր սահմանների, որոնք որոշում են, թե որ կալիֆորնիացիներն են ներկայացվում յուրաքանչյուր ընտրական շրջանով:
- **Արդար ներկայացուցչություն**—Պատմականորեն, օրենսդիրները գծագրել են քարտեզներ, որոնք նրանց թույլ են տվել ընտրել իրենց ընտրողներին՝ փոխանակ ընտրողներին տալու իրենց ներկայացուցիչներին ընտրելու կարողությունը: Այս նախկին համակարգը անտեսել է արդար ներկայացուցչության հայեցակարգը, ինչը կայանում է մարդկանց՝ իրենց ներկայացուցիչներին ընտրելու իշխանությունը տալու մեջ:

+



+

=



Ինչու է կարևոր շրջանների անկախ վերադասավորումը



Սահմանագծերի գծման 6 չափանիշներ հերթականությամբ

Հանձնաժողովը շրջանային քարտեզների գծման պահին պետք է հետևի հետևյալ կշռված չափանիշներին, այս հերթականությամբ՝

1 Equal Population

Districts must be of equal population to comply with the US Constitution.

2 Voting Rights Act

Districts must comply with the Voting Rights Act to ensure that minorities have an equal opportunity to elect representatives of their choice.

3 Contiguity

Districts must be drawn so that all parts of the district are connected to each other.

4 Communities of Interest

Districts must minimize the division of cities, counties, neighborhoods, and communities of interest to the extent possible

5 Geographically Compact

Districts should be geographically compact such that nearby areas of population are not bypassed for more distant populations. This requirement refers to density, not shape.

6 Nesting Districts

Where practicable each Senate District should be comprised of two complete and adjacent Assembly Districts and Board of Equalization districts shall be composed of 10 complete and adjacent State Senate Districts.

Բացի այդ, քարտեզի ստեղծման ժամանակ չի կարող նկատի առնվել որևէ գործող քաղաքական գործիչի կամ քաղաքական թեկնածուի բնակության վայրը, և շրջաններ չեն կարող գծվել՝ գործող քաղաքական գործիչի, քաղաքական թեկնածուի կամ քաղաքական կուսակցության նախընտրելու կամ նրան խտրականության ենթարկելու համար:

WE DRAW THE LINES CA

Շրջանների վերադասավորման տարբեր ջանքեր

Նահանգ—Կոնգրեսական, Նահանգային Սենատ, Նահանգային Ժողով, և Հավասարեցման խորհուրդ.

Վարչաշրջաններ—58 վարչաշրջաններ, մի քանիսն իրենց սեփական գործընթացով:

Քաղաքներ—482 քաղաքներ, մի քանիսն իրենց սեփական գործընթացով:

Դպրոցական շրջաններ—1037 դպրոցական շրջաններ, մի քանիսն իրենց սեփական գործընթացով:

Շրջանների վերադասավորման ուրիշ ջանքեր— ջրային շրջաններ, համայնքային քոլեջի շրջաններ, և այլն:

Պատմություն

- **2010 թվականից առաջ**—Օրենսդիրներն էին գծում սահմանագծերը, կամ դատարանն էր անում դա, եթե օրենսդիրը չէր կարողանում այս պարտականությունը պատշաճորեն կատարել
- **Առաջարկ 11 (2008)**—Քվեարկողներ ՆԱԽ օրենք/Մենք ենք սահմանագծերը գծում Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Հավասարեցման խորհրդի համար
- **Առաջարկ 20 (2010)**—Կոնգրեսական շրջանների հավելում
- **2010 թ. Շրջանների վերադասավորման հանձնաժողով**
- **2020 թ. Շրջանների վերադասավորման հանձնաժողով**
- **Անկախ Հանձնաժողովներով ուրիշ նահանգներ**—Arizona-ն, Colorado-ն, Idaho-ն, Michigan-ը, Montana-ն և Washington-ը սահմանագծերի գծման համար օգտվում են անկախ հանձնաժողով

Հանձնակատարների ընտրություն

- Հանձնակատարների դիմումներ (Ավելի քան 20,000 դիմորդ)
- Լրացուցիչ դիմումներ (2,000)
- Հարցազրույց/Զննման գործընթաց (120 դիմորդ)
- Դիմորդների խմբերի ուղարկում օրենսդիրին (60 դիմորդ)
- Օրենսդրական ջնջումներ (12 ջնջում յուրաքանչյուր կողմի)
- Վիճակագրության [illegible] Առս[illegible]
- Վ[illegible] խորհ[illegible]



WE DRAW THE LINES CA

Ով ենք մենք

2020 թ. Հանձնակատարներ 14 Անդամ

•**Isra Ahmad**, San Jose, Ոչ մի կուսակցական նախապատվություն	•**Sara Sadhwani**, La Cañada Flintridge, Դեմոկրատ
•**Linda Akutagawa**, Huntington Beach, Ոչ մի կուսակցական նախապատվություն	•**Patricia S. Sinay**, Encinitas, Դեմոկրատ
•**Jane Andersen**, Berkeley, Հանրապետական	•**Derric Taylor**, Los Angeles, Հանրապետական
•**Alicia Fernández**, Clarksburg, Հանրապետական	•**Pedro Toledo**, Petaluma, Ոչ մի կուսակցական նախապատվություն
•**Neal Fornaciari**, Tracy, Հանրապետական	•**Trena Turner**, Stockton, Դեմոկրատ
•**J. Ray Kennedy**, Morongo Valley, Դեմոկրատ	•**Angela Vázquez**, Los Angeles, Դեմոկրատ
•**Antonio Le Mons**, Studio City, Ոչ մի կուսակցական նախապատվություն	•**Russell Yee**, Oakland, Հանրապետական

Հանձնակատարների պարտականությունները

- **Համայնքների հետ շփում/ Հանրային ներդրման հանդիպումներ**
  - Հանրությանը ներգրավել
  - Հավաքել հանրության ներդրումը
  - Լսել հանրության վկայությունը

- **Գծել քարտեզներ--**Սևագիր և վերջնական քարտեզներ Կոնգրեսի համար (52), Սենատի համար (40), Ժողովի համար (80) և Հավասարեցման խորհրդի համար (4)

ՕՐԻՆԱԿ՝ SACRAMENTO



ԿՈՆԳՐԵՍ

(700,000 մարդ)

ՍԵՆԱՏ

(931,000 մարդ)

ԺՈՂՈՎ

(466,000 մարդ)



ՀԽ

(9 միլիոն մարդ)

Թիմաց գոտիներ

ԳՈՏԻ	ՎԱՐՉԱՇՐՋԱՆՆԵՐ	ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐՆԵՐ
Ա	Del Norte, Humboldt County, Mendocino, **Lake, Napa, Sonoma, Trinity**	Հանձնակատար Toledo Հանձնակատար Taylor
Բ	Butte, Colusa, Glenn, Lassen, Modoc, Plumas, Shasta, Siskiyou, Tehama	Հանձնակատար Sinay Հանձնակատար Yee
Գ	Alameda, Contra Costa, Marin, San Francisco, San Mateo, Santa Clara, Solano	Հանձնակատար Yee Հանձնակատար Toledo
Դ	El Dorado, Nevada, Placer, Sacramento, Sierra, Sutter, Yolo, Yuba	Հանձնակատար Fernandez Հանձնակատար LeMons
Ե	Monterey, San Benito, San Luis, Obispo, Santa Barbara, Santa Cruz, Ventura	Հանձնակատար Fornaciari Հանձնակատար Kennedy
Զ	Fresno, Kern, Kings, Madera, Merced, San Joaquin, Stanislaus, Tulare	Հանձնակատար Turner Հանձնակատար Vazquez
Է	Alpine, Amador, Calaveras, Inyo, Mariposa, Mono, Tuolumne	Հանձնակատար Andersen Հանձնակատար Akutagawa
Ը	Los Angeles	Հանձնակատար Taylor Հանձնակատար Ahmad
Թ	Riverside, San Bernardino	Հանձնակատար Kennedy Հանձնակատար LeMons
Ժ	Orange	Հանձնակատար Akutagawa Հանձնակատար Sadhwani
ԺԱ	Imperial, San Diego	Հանձնակատար Sinay Հանձնակատար Ahmad

WE DRAW THE LINES CA

Շահագրգիռ համայնքներ (COI)

- **Շահագրգիռ համայնքներ (Communities of Interest, COI)**-- Շահագրգիռ համայնքը կենտրոնացված մի բնակչություն է, որը կիսում է ընդհանուր սոցիալական և տնտեսական շահագրգռություններ, որոնք պետք է ներառվեն մի առանձին շրջանում, նրա արդյունավետ և արդար ներկայացուցչության համար:
- Օրինակները ներառում են՝ մշակույթը, մարզեր որտեղ մարդիկ կիսում են ապրելու նույնանման չափանիշներ, օգտվում են նույն փոխադրամիջոցներից, ունեն աշխատանքի նույնանման պատեհություններ, կամ նրանց մատչելի են նույն զանգվածային լրատվամիջոցները:
- Մարդիկ կարող են պատկանել բազմակի շահագրգիռ համայնքների:
- Շահագրգիռ համայնքը նույնը չէ ինչ շրջանը, բայց շրջանի գլխավոր շինանյութն է:

Ձեր համայնքների սահմանումը

- Շահագրգիռ համայնքները կարելի է նկարագրել ստեղծելով քարտեզներ և մեզ հայտնելով ձեր համայնքի մասին:
- **Բանավոր վկայություն**—Անձնական պատմությունները հզոր են և միաժամանակ ներկայացնում են պատմական համատեքստ:
- **Գրավոր վկայություն**—Գրավոր նկարագրությունը կարող է օգտագործվել ձեր համայնքի պատմությունը հայտնելու համար:
- **Համայնքային հարցեր—**Համայնքները հաճախ ներգրավվում են շրջանների վերադասավորման մեջ, քանի որ զգում են, որ իրենց հարցերը համապատասխան լուծում չեն գտնում իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով: Կա՞ն հարցեր, որոնց վրա կենտրոնանում է ձեր շահագրգիռ համայնքը:
- **Սահմանային քարտեզներ**—Ստեղծեք ձեր թաղամասի կամ տարածքի քարտեզը:

Գործընթացին մասնակցելը

1

ՆԿԱՐԱԳՐԵՔ
ձեր համայնքը

2

ԳԾԵՔ
ձեր համայնքը
քարտեզի վրա

3

ՈՒՂԱՐԿԵՔ
ձեր վկայությունն
ուղղակի
Հանձնաժողովին

Ձեր ներդրումը ներկայացրեք հենց այսօր հետևյալ կայքում՝
DrawMyCACommunity.org

WE DRAW THE LINES CA

Հանրային ներդրում ներկայացնելու եղանակներ

- **Շահագրգիռ համայնքների (COI) քարտեզագծման գործիք՝** DrawMyCACommunity.org
  - Տրամադրելի կլինի նաև թղթյա ձևով կանխավճարված նամականիշով:
- **Մեր կայքում՝** www.WeDrawTheLinesCA.org, սեղմեք «Գծեք իմ CA համայնքը պատկերակը» (Draw My CA Community icon)
- **Էլ. փոստով՝** VotersFirstAct@crc.ca.gov
- **Հեռախոսով՝** (916) 323-0323
- **Փոստով՝** California Citizens Redistricting Commission
  721 Capitol Mall, Suite 260
  Sacramento, CA 95814

Առցանց COI գործիքը տրամադրելի է անգլերեն, իսպաներեն, պարզեցված չինարեն, ավանդական չինարեն, վիետնամերեն, տագալերեն, կորեերեն, հայերեն, պարսկերեն, արաբերեն, ռուսերեն, ճապոներեն, փենջաբերեն և խմերերեն լեզուներով: Ձեռնարկներ ևս մատչելի են այդ լեզուներով:

Լեզվական մատչելիություն

- Նյութերի թարգմանություն՝ Իրողությունների թերթիկ, Թռուցիկ, Հաճախակի տրվող հարցեր, Կալիֆորնիայի շրջանների վերադասավորման հիմունքների ներկայացում
  - Լեզուներ—իսպաներեն, պարզեցված չինարեն, ավանդական չինարեն, վիետնամերեն, տագալերեն, կորեերեն, հայերեն, պարսկերեն, արաբերեն, ռուսերեն, ճապոներեն, փենջաբերեն և խմերերեն:
- Քաղաքացիների շրջանների վերադասավորման հանձնաժողովի (CRC) գործնական հանդիպումներում հնարավոր է հանրային նկատողության բանավոր թարգմանության տրամադրումը՝ հինգ օր առաջ նախազգուշացումով:
- CRC-ին կարող եք ուղարկել գրավոր հանրային ներդրում որևէ ձևաչափով և այն կթարգմանվի անգլերենի:
- Հանձնաժողովը ոչ-անգլերեն ներդրումները COI գործիքից կթարգմանի անգլերենի:
- Եթե կարիք ունեք բանավոր թարգմանչի՝ հանդիպման ընթացքում ներդրում ներկայացնելու համար, խնդրում ենք, որ Հանձնաժողովին նախազգուշացնեք հանդիպումից հինգ աշխատանքային օր առաջ, բանավոր թարգմանչի ծառայություններ խնդրելու համար: Հանձնաժողովը կփորձի խնդրվող լեզվի համար պայմանագիր կնքել բանավոր թարգմանչի հետ:

CA Գերագույն դատարանի վճիռը

CA օրենսդիր մարմինն ընդդեմ Alex Padilla-ի S262530
2020 թ. Հուլիսի 17

Կալիֆորնիայի Գերագույն դատարանը որոշում կայացրեց 2020 թ. Հուլիսի 17-ին, որ Հանձնաժողովը պետք է ունենա մինչև 2021 թ. Դեկտեմբերի 15-ը՝ իր քարտեզները Կալիֆորնիայի Նահանգային քարտուղարին ներկայացնելու համար, մարդահամարի արդյունքների հրապարակման ուշացման պատճառով: Եթե մարդահամարի տվյալները ստացվեն 2021 թ. Հուլիսի 31-ից հետո, Հանձնաժողովի վերջնաժամկետը կհարմարեցի համապատասխանաբար:

Ժամանակացույց

- **2021 թ. փետրվար-մայիս՝** Կրթական ներկայացումներ (Կալիֆորնիայի շրջանների վերադասավորման հիմունքները)
- **2021 թ. հունիս-օգոստոս՝** Հանրային ներդրման հանդիպում (COI)
- **2021 թ. օգոստոսի 15-30՝** Մարդահամարի սպասված տվյալները Նահանգին
- **2021 թ. սեպտեմբերի 30-հոկտեմբերի 31՝** Մարդահամարի սպասված տվյալները Հանձնաժողովին
- **2021 թ. հոկտեմբերից-դեկտեմբեր՝** Հանրային ներդրման հանդիպումներ/Սահմանագծի գծման սեսիաներ (նախաշրջանային քարտեզներ)
- **2021 թ. նոյեմբերից-դեկտեմբեր՝** Սևագիր շրջանային քարտեզների թողարկում
- **2021 թ. Դեկտեմբերից 2022 թ. հունվար** Հանրային ներդրման հանդիպումներ/Սահմանագծի գծման սեսիաներ
- **2021 թ. Դեկտեմբերից 2022 թ. փետրվար** Շրջանային քարտեզների թողարկում
- **2021 թ. Դեկտեմբ** սն շրջանային քարտեզները Նահա



Հիշեցում—Այսօր հանրային ոչ մի ներդրում չի առնվելու

Ըստ Կալիֆորնիայի կառավարական օրենսգրքի 8253(ա)(3) հատվածի-- Հանձնաժողովի անդամներն ու անձնակազմը շրջանների վերադասավորման հարցերով չեն կարող հաղորդակցել որևէ անձի հետ կամ հաղորդակցություններ ստանալ որևէ անձից՝ հանրային լսումներից դուրս: Հետևաբար, Հանձնաժողովը այս կրթական ներկայացումների ընթացքում ոչ մի հանրային ներդրում չի ընդունի:

Հանրային ներդրում ներկայացնելու համար խնդրում ենք այցելել Հանձնաժողովի կայքը՝ WeDrawTheLinesCA.org.

Դիմեք մեզ

Տեղեկատվական սեսիա խնդրելու համար խնդրում ենք դիմել Հանձնաժողովին:

California Citizens Redistricting Commission
721 Capitol Mall, Suite 260
Sacramento, CA 95814
(916) 323-0323
Marcy.Kaplan@crc.ca.gov

Հանձնաժողովի մասին հավելյալ տեղեկության համար խնդրում ենք այցելել հետևյալ կայքը՝
WeDrawTheLinesCA.org

Սոցիալական մեդիայի բռնակներ՝ @WeDrawTheLinesCA